Կոռուպցիայի ընկալման համաթիվ. Մեթոդաբանության համառոտ նկարագրություն

Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ) համախմբում է մի շարք տարբեր աղբյուրներից վերցված տվյալները, որոնք վեր են հանում գործարարների և տվյալ երկրների գծով փորձագետների ընկալումներն այդ երկրի հանրային ոլորտում կոռուպցիայի մակարդակի վերաբերյալ:

ԿԸՀ-ն հաշվարկելու քայլերի հերթականությունն է.

1. Վավեր աղբյուր համարվելու համար տվյալների յուրաքանչյուր աղբյուր, որն օգտագործվում է ԿԸՀ-ի հաշվարկման համար, պետք է բավարարի հետևյալ չափանիշներին.
• Հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալումը ներկայացնի որպես քանակական մեծություն

• Հիմնված լինի հուսալի և հիմնավոր մեթոդաբանության վրա, որը մեծ թվով երկրների ԿԸՀ արժեքները և նրանց դասակարգումը ներկայացնում է միևնույն սանդղակի վրա

• Իրականացված լինի վստահելի կազմակերպության/կառույցի կողմից

• Հնարավորություն տա տարբերակել երկրներն ըստ իրենց ԿԸՀ արժեքների

• Գնահատի բավականին զգալի թվով երկրներ

• Գնահատումը կատարվում է տվյալ երկրի գծով փորձագետի կամ գործարարի կողմից

• Կազմակերպություն/կառույցը կրկնում է իր ուսումնասիրությունը առնվազն երկու տարին մեկ հաճախականությամբ

ԿԸՀ-ն հաշվարկվում է՝ օգտագործելով 12 տարբեր կազմակերպությունների/կառույցների տվյալների 13 տարբեր աղբյուրներ, որոնք չափում են կոռուպցիայի ընկալումը նախորդ երկու տարիների ժամանակահատվածում : Այս աղբյուրները մանրամասն կերպով նկարագրված են ԿԸՀ-ն հաշվարկելու համար օգտագործված աղբյուրների նկարագրության փաստաթղթում:

2. Ստանդարտացնել տվյալների աղբյուրները. 0-ից 100 սանդղակի վրա, որտեղ 0-ն ընկալված կոռուպցիայի ամենաբարձր, իսկ 100-ը՝ ամենացածր մակարդակն է: Այս ստանդարտացումը կատարվում է հանելով ելակետային տարում (2012թ.) յուրաքանչյուր աղբյուրի միջին արժեքը յուրաքանչյուր երկրի ԿԸՀ արժեքից, ապա բաժանելով այն ելակետային տարում այդ աղբյուրի ստանդարտ շեղումի վրա: Ելակետային տարվա նշված արժեքների հանումը և բաժանումն ապահովում է ԿԸՀ արժեքների համեմատելիությունը՝ սկսած ելակետային 2012 թվականից: Այս գործողությունից հետո ստանդարտացված արժեքները բերվում (տրանսֆորմացվում) են ԿԸՀ սանդղակին՝ բազմապատկելով այն ԿԸՀ 2012թ.-ի ստանդարտ շեղման արժեքի (20) վրա, և

այնուհետև գումարելով դրան ԿԸՀ այդ նույն, 2012թ. արժեքը (45): Դրանով տվյալների բազմությունը համապատասխանեցվում է ԿԸՀ 0-ից 100 սանդղակին:

3. Հաշվարկել միջինը. Որպեսզի տվյալ երկիրը կամ տարածքն ընդգրկվի ԿԸՀ դասակարգման աղյուսակում, այդ երկիրը պետք է գնահատվի առնվազն երեք աղբյուրների կողմից: Տվյալ երկրի ԿԸՀ արժեքը հավասար է այդ երկրի ԿԸՀ-ն չափելու համար օգտագործված բոլոր աղբյուրների ստանդարտացված արժեքների միջին թվաբանականին: Ստացված արժեքն այնուհետև կլորացվում է ամբողջ թվերի:

4. Նշել անորոշության աստիճանը. ԿԸՀ արժեքի հետ միասին ներկայացվում է նաև նրա ստանդարտ սխալը և վստահության միջակայքը, որոնցով գնահատվում է տվյալ երկրի/տարածքի ԿԸՀ արժեքը հաշվարկելու համար օգտագործված աղբյուրների արժեքների միջև տարբերությունների աստիճանը: